*ըմբռնելու ամպերէն եկող աստուածային պատգամը, փոխանցուած մեզի Պետրոս Առաքեալի Բ. Թուղթէն առնուած մեր այսօրուան բնաբանով. «Եւ զայս բարբառ մեք իսկ լուաք եկեալ յերկնից որ ընդ նմա իսկ էաք ի սուրբ լերինն. Դա՛ է որդի Իմ սիրելի ընդ որ հաճեցայ, դմա լուարո՛ւք», այժմ և միշտ և յաւիտեանս, յաւիտենից. Ամէն»:*

*Ն.Ա.Մ.*

«Ան կը լքէր մէկ լերան փառքը կրելու ամօթանքը ուրիշ լերան մը: Ան Այլակերպութեան լեռնէն կ'անցնէր Գողգոթա, այսպէս իր յաւիտենական փառքը պահելու իր չարչարանքներու ետին: Բայց այդ մէկը սուրբ և օրհնեալ չարչարանք էր, որովհետեւ անոնցմով էր, որ մարդկութեան մեղքի խարանը միանգամընդմիշտ կը վերցուէր...»:



## ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ

### ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

*1 Եւ յետ վեց աւուր առնու ընդ իւր Յիսուս*
*զՊետրոս և զՅակովբոս և զՅովհաննէս*
*եղբայրն նորա, և հանէ զնոսա ի լեառն մի*
*բարձր առանձինն.*
*2 Եւ այլակերպեցաւ առաջի նոցա, և*
*լուսաւորեցան երեսք նորա իբրեւ զարեգակն,*
*եւ հանդերձք նորա եղէն սպիտակ իբրեւ լոյս:*
*3 Եւ ահա երեւեցան նոցա Մովսէս եւ Եղիա,*
*4 որ խօսէին ընդ նմա: Պատասխանի ետ*
*Պետրոս եւ ասէ ցՅիսուս, Տէր, բարւոք է մեզ*
*աստ լինել, եթէ կամիս, արասցուք երից*
*տաղաւարս՝ մի քեզ եւ մի Մովսիսի և մի*
*5 Եղիայի: Եւ մինչդեռ նա խօսէր, ահա ամպ*
*լուսաւոր հովանի եղեւ ի վերայ նոցա. ձայն*
*եղեւ յամպոյն եւ ասէ, Դա է Որդի իմ սիրելի*
*6 ընդ որ հաճեցայ, դմա լուարուք: Իբրեւ*
*լուան աշակերտքն, անկան ի վերայ երեսաց*
*7 իւրեանց և երկեան յոյժ: Եւ մատուցեալ*
*Յիսուս բուռն եհար զնոցանէ եւ ասէ, Յոտն*
*8 կացէք և մի՛ երկնչիք: Ամբարձին զաչս*
*իւրեանց և ոչ զք տեսին՝ բայց միայն զՅիսուս:*
*9 Եւ մինչդեռ իջանէին ի լեռնէ անտի,*
*պատուիրեաց նոցա Յիսուս եւ ասէ, Մի՛ումեք*
*ասիցէք զտեսիլդ, մինչեւ Որդի մարդոյ ի*
*10 մեռելոց յարիցէ: Հարցին ցնա աշա-*
*կերտքն և ասեն, Զիարդ դպիրքն ասեն 11 եթէ*
*Եղիայի նախ պարտ է գալ: Պատասխանի*
*ետ նմա Յիսուս և ասէ ցնոսա, Եղիա 12 գայ*
*եւ հաստատեսցէ զամենայն: Այլ ասեմ ձեզ,*
*զի Եղիա եկեալ իսկ է. եւ ոչ ծանեան զնա, այլ*
*արարին ընդ նա զոր ինչ կամեցան, նոյնպէս*
*և Որդի մարդոյ չար- 13 չարելոց է ի նոցանէ:*
*Յայնժամ ի միտ ասին աշակերտքն թէ վասն*
*Յովհաննու մկրտչի ասաց ցնոսա:*

